ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՈՌ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մագիստրոս
Էլհասցե՝ gor-meliksetyan@mail.ru

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ, ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ)

Ամփոփում

Մոնումենտալ արվեստը տարածական արվեստների ուրույն բնագավառ է, որի ստեղծագործությունները կիրառվում են կոնկրետ ճարտարապետական միջավայրի համար և գաղափարով, տեսողական-արխիտեկտոնիկ ու գունային կառուցվածքով համապատասխանում են նրան:

Մոնումենտալ արվեստի գործեր են համարվում հուշարձաններն ու կոթողները, կառույցների քանդակագործական, գեղանկարչական, խճանկարային հարդարանքը, որմնանկարները (որոշ արվեստաբաններ մոնումենտալ արվեստի գործեր են համարում նաև ճարտարապետական շինությունները): Շինության ճակատի և ինտերիերի հորինվածքները (որմնապատկերները), հրապարակի հուշարձանը, սովորաբար մարմնավորում ու պրոպագանդում են տվյալ ժամանակի սոցիալական և փիլիսոփայական առավել ընդհանուր գաղափարներ, նվիրվում ականավոր գործչի կամ նշանավոր իրադարձության հիշատակին:

Համադրվելով կոթողային արվեստին՝ մոնումենտալ արվեստը կոնկրետացնում է կառույցի, անսամբլի կամ ճարտարապետորեն կազմակերպված տարածության գաղափարական բովանդակությունը:

Հոդվածը համեմատական քննության է ենթարկում Հայաստանում մոնումենտալ արվեստի ոչ միայն կոթողային տեսակը, այլ նաև մոնումենտալ գեղանկարչական արվեստը՝ ի դեմս եկեղեցական որմնանկարչության, որը հայ միջնադարյան արվեստի փառավոր էջերից մեկն է: Նման արժեքները վեհ գաղափարներ արտահայտելու ձգտումով են պայմանավորված՝ այդ գործերի վսեմ գեղարվեստական ձևերը, մարդու, առարկայական–տարածական միջավայրի և բնության հետ դրանց մասշտաբային հարաբերակցությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. մոնումենտալ արվեստ, կոթողային արվեստ, որմնանկարչություն, մոնումենտալ գեղանկար-

չություն, խճանկարչություն, միջնադարյան արվեստ, Ախթամարի որմնանկարներ, պալատական, եկեղեցական, հորինվածք:

Ներածություն

Հայկական լեռնաշխարհում մոնումենտալ արվեստի գործեր են ստեղծվել դեռևս նախնադարյան արվեստի շրջանում: Պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ: Գրավոր տեղեկություններ են հասել հոյակերտ մեհյանների (Բագարանում, Աշտիշատում, Արմավիրում, Արտաշատում և այլուր) բրոնզաձույլ և ոսկեձույլ բազիների (Արամազդի, Անահիտի, Վահագնի, Աստղիկի, Տիրի և այլն) մասին: Էրեբունիի որմնանկարները ենթադրել են տալիս այդ շրջանի մոնումենտալ գեղանկարչության բարձր զարգացվածության մասին: Մոնումենտալ արվեստի յուրատիպ հուշարձաններ են ստեղծվել ճարտարապետության բնագավառում: Մ.թ. սկզբից պահպանվել է Գառնու տաճարը: Մոնումենտալ դեկորատիվ բարձրարվեստ խճանկարչության օրինակ է Գառնիի բաղնիքի հատակը: Քրիստոնեության շրջանում կառուցվել են տարբեր տիպերի տաճարներ, պալատներ, որոնց պահպանված օրինակները վկայում են մոնումենտալ արվեստի խնդիրների ինքնուրույն, յուրօրինակ ազգային լուծումների մասին (Զվարթնոց, Անիի մայր տաճար, Գագկաշեն և այլն): Արվեստների համադրության վաղագույն օրինակներից են Ախթամարի տաճարը (ինչպես և պալատը՝ ըստ գրավոր նկարագրության), Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Անիում և այլն, որոնցում ճարտարապետության վեհությունը բարձրաճաշակ է ու բազմազան արտահայտչամիջոցներով համահունչ քաղաքագործությանը և որմնանկարչությանը: Յուրակերպ գեղարվեստական մտածողության արդյունք են խաչքարերը, որոնց մոնումենտալ հնչողություն է հաղորդվել և տվյալ ճարտարապետական միջավայրում և առանձին կանգնած՝ որպես հուշարձան կոթողներ: Մոնումենտալ արվեստի խնդիրներին է ծառայել նաև հայկական զարդապատկերը: Ժամանակի պահանջմունքները, ճաշակը բավարարող բազմաթիվ գործեր են ստեղծել Հովնաթանյան ընտանիքի վարպետներից Նաղաշ Հովնաթանյանը (Երևանի Պողոս-Պետրոս, Ս. Անանյա եկեղեցիներում, Էջմիածնի տաճարում), Հակոբ և Հարություն Հովնաթանյանները (Ապրակունիսի Ս. Կարապետ վանքում): Մոնումենտալ արվեստը աննախընթաց զարգացման է հասել Խորհրդային Հայաստանում: Մոնումենտալ արվեստում յուրահատուկ տեղ են գրավում Մ. Սարյանի ստեղծած Սունդուկյանի անվան թատրոնի վարագույրը, նրա էսքիզներով ապակե նկարները («Հայ համերգ»-ի փոքր դահլիճում): Հ. Գյուրջյանի, Դ. Մերկուրովի, Գ. Յակուլովի, Ա. Սարգսյանի, Մ. Ստեփանյանի և ուրիշների սկսած նոր մոնումենտալ արվեստը իր

զարգացումն է գտել հայ արվեստագետների ավագ, միջին և երիտասարդ սերնդի գործերում:

Ե. Քոչարի «Սասունցի Դավիթ»-ը առաջնակարգ տեղ է գրավում այդ ասպարեզում: Ազգային մոնումենտալ արվեստը Հայաստանում առաջընթաց է ապրում Գ. Խանջյանի, Ղ. Չուբարյանի, Ա. Հարությունյանի, Ն. Նիկողոսյանի, Հ. Մինասյանի, Վ. Խաչատրյանի, Ե. Վարդանյանի, Ս. Մանասյանի և ուրիշների ստեղծագործությունների շնորհիվ:

Մեթոդաբանությունը

Հայկական մոնումենտալ արվեստը (որմնանկարչություն) հատվածն ուսումնասիրելու համար կիրառել ենք վերլուծական, քննական, համեմատական, համադրական մեթոդներ:

***

Հայ կերպարվեստի բազմադարյան պատմության մեջ կարևոր դեր է գրավում մոնումենտալ գեղանկարչությունը՝ որմնանկարչությունը: Որպես ժողովրդական լայն զանգվածների հասցեագրված արվեստ, այն յուրաքանչյուր պատմաժամանակահատվածում արտահայտում է ոչ միայն ժամանակի գեղարվեստական ու գեղագիտական ըմբռնումները, այլև հասարակական մտքի տեղաշարժերը, սոցիալ-քաղաքական բնույթի փոփոխությունները, փոխազդեցությունների ոլորտը:

Որմնանկարչությունը գաղափարական ներգործման հզոր միջոց էր հատկապես միջնադարում: Ի տարբերություն գրքի կանոնական նկարազարդման, որը դիտողների նեղ շրջանակ կարող էր ունենալ, բոլորին տեսանելի որմնանկարը շատ ավելի կարևոր դեր էր կատարում: Մեր օրերին հասած հայկական որմնանկարների մեծագույն մասը վերաբերում է հենց միջնադարին:

Մոնումենտալ գեղանկարչությունը Հայաստանում խոր արմատներ ունի: Հատկանշական է, որ այստեղ լայն տարածում է ունեցել ժայռապատկերային արվեստը: Ավելի ուշ, հասարակական-տնտեսական վերելքով պայմանավորված՝ շինարարական արվեստի ձևավորման ու զարգացման հետ, աստիճանաբար կիրառություն է գտել պաշտամունքային կառույցների ներքին պատերի հարդարումը նկարազարդման միջոցով:

Հայաստանում ստեղծված հնագույն որմնանկարները վերաբերում են արարատի (Ուրարտու) թագավորության ժամանակներին (մ.թ.ա. IX-VI դդ.): Որմնանկարների հատվածներ են հայտնաբերվել մ.թ.ա. 782թ. հիմնադրված Էրեբունի (Երևան), Թեյշեբաինի քաղաք-ամրոցում, Արևմտյան Հայաստանի Ալթին-Թափե, Ազնավուր-Թափե բնակավայրերում:

Էրեբունի Խալդ աստծո տաճարը և թագավորական ընդարձակ պալատը զարդարող որմնանկարները մեր օրերն են հասել հատվածաբար: Ներկայացնում են հիմնականում պաշտամունքային պատկերներ ու տեսարաններ՝ ասվածների երթ, զոհաբերության տարվող կենդանիներ, կենաց ծառեր և այլն: Շուրջ 80 աստվածություններ ընդգրկող դիցարանը, բնականաբար, հսկայական նյութ է տվել նկարիչներին:

Էրեբունիի որմնանկարներում զգալի տեղ են գրավում հորիզոնական շարքերով դասավորված հաջորդաբար կրկնվող տարրերով զարդագոտիները: Զգալի արտահայտչությամբ են օժտված հատկապես աշխարհիկ բնույթի պատկերները, որոնք ներկայացնում են որսի տեսարան (մարտակառքով), երկրագործական և անասնապահական աշխատանքի դրվագներ:

Որմնանկարների ստեղծման ժամանակ հում աղյուսից շարված պատերը ծածկող ծեփի բարակ շերտի վրա նախապես կատարվել են պատկերների ուրվանշումները, որին հետևել է գունազարդումը կատարված գլխավորապես անխառն գույներով [1]:

Արարատի թագավորության անկումից հետո որմնանկարչության արվեստի ավանդներն անկասկած շարունակվել են: Մասնավորապես, որմնանկարների հատվածներ են հայտնաբերվել Հայաստանի մայրաքաղաք Արտաշատում:

Մոնումենտալ գեղանկարչության մի եզակի նմուշ է պահպանվել Գառնիում[2]:

Այստեղ նշանավոր հեթանոսական տաճարի հարևանությամբ գտնվող բաղնիքի նախասրահի հատակը զարդարված է բարձրարվեստ խճանկարով (մ.թ. III դ.), որն ունի առասպելա-դիցաբանական սյուժե: Ըստ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի … «Գառնիի խճանկարում պատկերված են դիցաբանական տեսարաններ, որոնք նշանավորում են կյանքի ծնունդը՝ կենարար ջրում, սերունդների առաջացումը և շարունակությունը բոլոր արարածներին միմյանց կապող սիրո շնորհով… Կյանք, սեր, պտղաբերություն՝ ահա Գառնիի խճանկարի հիմնական բովանդակությունը»[3]:

---

[1] Կ. Հովհաննիսյան, Էրեբունի որմնանկարները, Ե., 1978, էջ 11:

[2] Բ. Առաքելյան, ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմություն, Ե., 1976, էջ 91-102:

[3] Ա. Սահինյան, Գառնիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Ե., 1999, էջ 24-45

Ավելացնենք, որ մոնումենտալ արվեստի հիմնական ճյուղերից մեկը՝ խճանկարչությունը, տարածված է եղել նաև հայ վաղ քրիստոնեական արվեստում: Խճանկարներով զարդարվել են Էջմիածնի Մայր Տաճարը, Դվինի Սուրբ Գրիգոր եկեղեցին, Զվարթնոցի տաճարը, Երուսաղեմի հայկական եկեղեցիները և այլ հուշարձաններ:

Այժմ անրադառնանք որմնանկարչական հուշարձաններին:

IV-VI դդ. հայկական եկեղեցիներում պահպանվել են որմնանկարների, իսկ ավելի հաճախ, միայն հիմնաներկի փոքր հատվածներ:

Դրանք փաստորեն հնարավորություն են տալիս խոսել որմնանկարների գոյության մասին, անհայտ թողնելով բազմաթիվ կարևորագույն մանրամասներ:

Հայ վաղ միջնադարյան արվեստում յուրօրինակ տեղ է գրավում VII դարի որմնանկարչությունը, շնորհիվ բավարար թվով հուշարձանների առկայության:

Որմնանկարներ են ունեցել հայ ճարտարապետության ոսկեդարի եկեղեցական կառույցներից շատերը, ինչպես Բագարանի և Մրենի տաճարները, Արթիկի Ս. Աստվածածնի և Ս. Գևորգ, Կոշի Ս. Ստեփանոս, Աշտարակի Կարմրավոր, Եղվարդի Ս. Զորավար, Պտղնիի ու Սիսյանի եկեղեցիները, Էջմիածնի մոտ գտնվող Թարգմանչաց վանքը, Զվարթնոցը և այլն:

Վաղ քրիստոնեական մոնումենտալ գեղանկարչության հայտնի հուշարձանների շարքում Լմբատավանքի որմնանկարն առանձնանում է պատկերագրության ինքնատիպությամբ, որովհետև ստեղծված է գլխավորապես Հին Կտակարանի բնագրերի, մասնավորապես Եզեկիել մարգարեի տեսիլքի գրական հիմքի վրա: Միջնադարյան շատ արվեստագետների համար ներշնչման աղբյուր հանդիսացած այդ «տեսիլքը» Լմբատավանքի վարպետը ներկայացնում է կուռ ու ամբողջական մի հորինվածքի մեջ, բնագրային բոլոր էական մանրամասների վերարտադրմամբ:

Աշխարհագրական համեմատաբար փոքր տարածության վրա գտնվող և ստեղծման ժամանակով իրար մոտ՝ Լմբատավանքի, Թալինի, Արուճի, Կոշի, Եղվարդի որմնանկարները առանձնանում են պատկերագրական և հորինվածքային յուրօրինակություններով, գունային տարբեր լուծումներով: Ինչպես նշում է Լ. Ա. Դուրնովոն, VII դարի որմնանկարները թույլ են տալիս դատելու մոնումենտալ գեղանկարչության ասպարեզում հայերի ունեցած ինքնուրույնության մասին, որն արտահայտվում է հատկապես պատկերագրության տեխնիկայի և գունային կառուցվածքի մեջ:

Հայկական ճարտարապետության ծաղկումը, որով պայմանավորված էր նաև որմնանկարչության վերելքը, ընդհատվեց արաբական տիրապետության հաստատմամբ[4]:

Միայն երկու հարյուր տարի անց, Բագրատունիների վերականգնած պետականությունը (885թ.) աշխուժացրեց մշակութային կյանքը, կառուցվեցին նոր տաճարներ, որոնց մի մասը զարդարված էր որմնանկարներով (Աղթամարի Ս. խաչ, Հաղպատի Ս. Նշան, Տաթևի և Գնդեվանքի եկեղեցիները):

Ս. Տեր-Ներսիսյանը, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներին նվիրված մեծարժեք ուսումնասիրության մեջ անդրադառնալով որմնանկարի պատկերագրական, ոճական առանձնահատկություններին, գրում է… «Ախթամարի որմնանկարները նոր լույս են սփռում արևելյան քրիստոնեական արվեստի բազմաթիվ յուրահատկությունների վրա: Գմբեթի թմբուկի վրա պատկերված ծննդոց ցիկլը ներկայացնում է եկեղեցական պատկերազարդման մի տիպատեսակ, որը մինչև այժմ իր նմանը չունի վաղ միջնադարյան արվեստում: Եզակի երևույթ է վերջին ընթրիքի փոխարինումը Քրիստոսի օծման տեսարանով: Դա ցույց է տալիս, որ տեսարանների սովորական ցիկլը փոփոխվել է, որպեսզի շեշտվի հայկական եկեղեցական ծիսակատարության յուրահատկությունը: Այն կոմպոզիցիան,որտեղ Քրիստոսը երևում է Մարիամ Մագթաղենացուն և որտեղ… ընդգրկված է Գագիկ թագավորը, ցույց է տալիս ավելի հետաքրքիր շեղում սովորական փորձից»:

Այսպիսով, հայ մոնումենտալ արվեստի լավագույն ավանդներով ստեղծված Ախթամարի որմնանկարները, որոնք սերտ ընդհանրություններ ունեն եկեղեցու բարձրաքանդակների հետ, ամփոփ պատկերացում են տալիս X դարի հայ որմնանկարչության (մոնումենտալ գեղանկարչության) բարձր մակարդակի, պատկերագրական և գեղարվեստական սկզբունքների մասին:

Հայ միջնադարյան պալատական որմնանկարչության աննշան հատվածներ են պահպանվել Անիի միջնաբերդում: Ն. Մառի կատարած պեղումներից հայտնաբերված դիմապատկերների բեկորները վկայում են, որ այստեղ եղել են կոմպոզիցիոն տեսարաններ:

Հայկական ճարտարապետության գոհարներից մեկը՝ Ախթամարի Ս. Խաչ եկեղեցին, կառուցել և որմնանկարազարդել է տվել Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը X դարի սկզբներին (915-921թթ.), ճարտա-րապետ՝ Մանվել:

[4] Толстой В. Б., Советская монументальная живопись. М., 1958.

Հայ միջնադարյան արվեստի հուշարձաններից շատերն ստեղծվել են հայկական գաղթավայրերում: XIV-XV դարերում աշխույժ մշակութային կյանքով էր ապրում Ղրիմի հայ գաղութը (Կաֆա, այժմ Թեոդոսիա), որտեղ մոնումենտալ գեղանկարչությունը առաջնահերթություն է հանդիսացել:

Եզրակացություն

Այսպիսով, հայկական մոնումենտալ արվեստը գեղարվեստական մշակույթի վաղ միջնադարյան և միջնադարյան արվեստի անմեկնելի առաջատարն է՝ իր տարատեսակներով հանդերձ:

Հայկական կոթողային արվեստը, ինչպես նաև մոնումենտալ գեղանկարչությունը՝ որմնանկարչությունը, խարսխված են հիմնականում քրիստոնեական թեմատիկայի վրա, որը էլ ավելի է բարձրացնում նրա գեղարվեստական արժեքը:

Ժամանակակից հայկական մոնումենտալ ստեղծագործությունները, ինչպես կոթողային, այնպես էլ որմնանկարչական, աղերսվում են միջնադարյան արվեստի ազգային ավանդույթներին, սովորույթներին, ինչու չէ, նաև թեմատիկայից: Սակայն հաճախ այդ երկերն ունենում են հարաբերական ինքնուրույն նշանակություն, հանդիսանում են համալիրի կարևոր դոմինանտը: Այդօրինակ ստեղծագործություններն աչքի են ընկել և ընկնում են աշխարհի, մարդու վսեմության մասին փիլիսոփայական խորհրդածությունների խորությամբ, պատկերավորման սկզբունքի առաջնայնությամբ:

Հայկական մոնումենտալ արվեստի մյուս տեսակի գործերը բարձր գաղափարներ չեն կրում և ճարտարապետության մեջ համահնչունորեն զարդարում են պատերի, ծածկերի, ճակատների և այլ մակերեսները, և իրենց արխիտեկտոնիկ զարդարվեստային արտահայտչամիջոցներով սահմանակից են դեկորատիվ արվեստին (երբեմն այդ ուղղությունը նշվում է մոնումենտալ դեկորատիվ արվեստ տերմինով): Սակայն մոնումենտալ արվեստի երկերի այդ երկու տարատեսակների միջև խիստ սահմանագիծ չկա:

Հայկական մոնումենտալ արվեստի պատմությունը վկայում է, որ մեր արվեստագետները ստեղծագործական առումով մեծ մասամբ կանգնած են եղել երեք ուղիների խաչմերուկում՝ սովորույթ, կանոն, նորամուծություն: Այդ է պատճառը, որ նրանց արվեստը միանշանակ ու միանման չէ, բազմաբնույթ է ու առանձնահատուկ:

Որմնանկարչության բնագավառում առանձնանում են այն բնորոշ առանձնահատկությունները, որոնց վրա հիմնված է ժամանակակից հայ արվեստը՝ իր անսպառ գեղարվեստականությամբ:

Մոնումենտալ արվեստը (կոթողային և որմնանկարչական) Հայաստանում երեք հազարամյակ ի վեր եղել և այսօր էլ գոյություն ունի որպես շարունակվող ընթացք: Այն ոչ միայն առաջադեմ է, այլ խորապես համահունչ է հայ արվեստի ձևամտածողությանը՝ մոնումենտալության վառ արտահայտված միտումներով:

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Բ., Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Ե., 1976:
2. Սահինյան Ա., Գառնիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Ե., 1999:
3. Հովհաննիսյան Կ., Էրեբունի որմնանկարները, Ե., 1978:
4. Толстой В. Б., Советская монументальная живопись. М., 1958:

Гор Меликсетян

Монументальное искусство в Армении /монументальное искусство, фрескопись/

Заключение

Ключевые слова и выражения: монументальное искусство, настенная живопись, монументальная живопись, мозаика, средневековое искусство, росписи Ахтамара, дворец, церковь, художественная литература.

Армянское монументальное искусство является бесспорным лидером раннесредневекового и средневекового искусства художественной культуры с его разновидностями.

Армянское монументальное искусство, как и монументальная живопись-роспись, завязаны в основном на христианские темы, что еще больше повышает ее художественную ценность.

Современные армянские монументальные произведения, как монументальные, так и настенные, вдохновлены национальными традициями и обычаями средневекового искусства, а почему бы и не тематикой. Однако часто эти вещи имеют относительно самостоятельное значение, являются важным доминантом комплекса. Такие произведения отличаются глубиной философских раздумий о мире, возвышенностью человека, главенством принципа образности.

Другие виды произведений армянского монументального искусства не несут высоких идей и гармонично украшают стены, крыши, фасады и другие поверхности в архитектуре, а своей архитектурно-орнаментальной выразительностью граничат с декоративно-прикладным искусством (иногда это направление обозначают термином монументально-декоративное искусство). Однако строгой границы между этими двумя видами монументальных произведений искусства нет.

История армянского монументального искусства свидетельствует о том, что наши художники стояли на пересечении трех творческих путей: обычая, правила, новаторства. Поэтому их искусство не однозначно и единообразно, оно разнообразно и особенно.

В области настенной живописи выделяются характерные черты, на которых базируется современное армянское искусство с его неиссякаемой художественностью.

Монументальное искусство (монументальное и настенное искусство) существовало в Армении три тысячелетия и продолжается по сей день. Оно не только прогрессивно, но и глубоко соответствует претенциозности армянского искусства, с ярко выраженными тенденциями монументальности.

Gor Meliksetyan

Monumental art in Armenia/monumental art, fresco painting/ Conclusion

Key words and expressions:monumental art, mural painting, monumental painting, mosaic, medieval art, Akhtamar's murals, palace, church, fiction.

Armenian monumental art is the undisputed leader of the early medieval and medieval art of artistic culture, with its varieties.

Armenian monumental art, as well as monumental painting - mural painting, are anchored mainly on Christian themes, which increases its artistic value even more.

Modern Armenian monumental works, both monumental and mural, are inspired by the national traditions and customs of medieval art, why not also by thematics. However, often these things have relative independent significance, are the important dominant of the complex. Such works are distinguished by the depth of philosophical meditations on the world, the sublimity of man, and the primacy of the principle of imaging.

Other types of works of Armenian monumental art do not carry high ideas and harmoniously decorate walls, roofs, facades and other surfaces in architecture,

and border on decorative art with their architectural ornamental expressions (sometimes this direction is indicated by the term monumental decorative art). However, there is no strict boundary between these two types of monumental works of art.

The history of Armenian monumental art testifies that our artists have stood at the intersection of three ways in terms of creativity: custom, rule, innovation. That is the reason why their art is not unambiguous and uniform, it is diverse and special.

In the field of mural painting, the characteristic features on which modern Armenian art is based, with its inexhaustible artistry, stand out.

Monumental art (monumental and mural art) has existed in Armenia for three millennia and continues today. It is not only progressive, but deeply in line with the pretentiousness of Armenian art, with clearly expressed tendencies of monumentality.

Խմբագրություն է ուղարկվել 17.02.2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 03.03.2023թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.